

կոճղեր, անտարակոյս յիշելով Սողոմոնի կողմէն գործածուած Սիթթիմի փայտը: Նոյն ժամանակի արհեստաւորներուն խորհուրդին անսալով այս նոր շինութեան համար մեծ թուով ծառի կոճղէ նեցուկներ գործածեց, բայց ան յարեցաւ իր երազին քառասուն թուին, չմոռնալով կանգնել յիշատակարան սեղան մը այն քառասուն մարտիրոսներուն որ մինչև հիմակ կը մշտնջենաւորեն Ս. Գերեզմանի քովը(*): Կիպրոսի յիշատակութիւնը՝ իբր տեղ՝ ուրկէ փայտը բերուած է, կը թելադրէ այն գաղափարը թէ ընդգրկուած շինութեան մեթոտը կրնայ գործադրուած ըլլալ նոյն կըղզիին հետաքրքրական բիւզանդական փոքրիկ եկեղեցիներու տանիքին մասին: Որքան կարելի է հասկնալ աւանդութենէն՝ փայտէ կլոր առաստաղը երուսաղէմի մէջ միեւնոյն ձևով կրնայ շինուած ըլլալ ծառի կոճղերով պատէ պատ դրուած, վերի ծայրը մէջտեղը լայն բացումով մը փայտէ կլոր կոճէքով (gourmette) մը բռնուած:

Եւտիքիոս կը նկարագրէ տանիքին արտաքին ծածկոյթը իբր հաստատուած ծառի կոճղերու ներքին կամ ստորին շրջանակով. և երկուքին մէջտեղը կար բաւականաչափ միջոց մը, այնպէս որ մարդ մը կըրնար ուղիղ քալել պատին վրայէն արտաքին առաստաղին տակ որ պատին արտաքին կողմին վրայ հաս-

(*) Ս. Յարութեան քանարին դուրսի կողմի զանգակասունը ունի փոքր մասուռ մը որ նուիրուած է Բառասուն մարտիրոսներուն, նըւիրում մը որ թեքս ծագում ունի Թովմաս պատրիարքի ժամանակին՝ երբ Ս. Գերեզմանի մօտերը կառոյց ի յիշատակ իր նշանաւոր երազին: Այս մասրան մէկ անկեան մէջ կայ ընդհարակ գերեզման մը որ կ'ըսեն թէ կը պարունակէ շատ մը պատրիարկներու ոսկեռոտիք (Jéf. էջ 105):